# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**03 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 12**

## ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 3-ի թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը.

1. Համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 19-ի N6-Ն, N7-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ
2. ՄԱՐԽՈՅԱՆ ՎՌԱՄ
3. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ
4. ՄԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ
5. ՄԱՐԳՍՅԱՆ ՄԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 13-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N6-Ն, N7-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի, 2-րդ և 3-րդ կետերի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 19-ի <<Համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N61-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N6-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
1) որոշման 2-րդ կետում նշված <<ուժը կորցրած ճանաչել 2016 թվականի դեկտեմբերի 26-ի <<Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի տարածքում օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների 2017 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին>> N61-Ն որոշման հավելվածը>> նախադասությամբ հանել:
2. Համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 19-ի <<Նոր Երզնկա համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին>> N7-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ
2. ՄԱՐԻՈՅԱՆ ՎՌԱՄ
3. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Նոր Երզնկա
համայնքի ավագանու 2017 թվականի
հունվարի 19-ի թիվ 7-Ն որոշման
Փոփ. 2017 թվականի փետրվարի 8-ի N 13-Ն որոշում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, որպես կանոն, մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:

1.2. Համայնքի ավագանու որոշմամբ քաղաքաշինական կանոնադրությունը կարող է մշակվել նաև մինչև գլխավոր հատակագծի և (կամ) գոտևորման նախագծի մշակումը՝ որպես առանձին փաստաթուղթ: Այս դեպքում կանոնադրությունը կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:

1.3. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

## II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ
(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

Նոր Երզնկա համայնքը գտնվում է Արայի լեռան հարավ-արևմտյան լանջին, սահմանակից է Արագածոտնի մարզի Աշտարակ, Կարբի, Օհանավան համայնքներին և Կոտայքի մարզի Եղվարդ համայնքին: Մարզկենտրոնից գտնվում է 65 կմ հեռավորության վրա, Երևան քաղաքից՝ 22 կմ: Նոր Երզնկա համայնքը հիմնադրվել է 1965 թվականին: Նոր Երզնկա անվանումը տրվել է արևմտյան Հայաստանի Երզնկա քաղաքի պատվին:

Համայնքը գտնվում է ծովի մակարդակից 1200 մետր բարձրության վրա: Աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ չոր ցամաքային:

Բնութագրվում է խիստ կտրտված ռելիեֆով: Նոր Երզնկա համայնքի տարածքը կարելի է պայմանականորեն բաժանել 2 մասի

1.Համայնքի հիմնական տարածքը

2.Համայնքի <<Վերի Ավան>> թաղամաս, որը գտնվում է հիմնական գյուղից 1 կմ հեռավորության վրա:
Համայնքը կառուցված է ըստ մշակված հատակագծի, ունի հարմարավետ և տրամաբանական հատակագծում: Բնակեցված հատվածը կոմպակտ, ուղղանկյուն (քառակուսի) կանոնավոր հատակագծում ունեցող տարածք է: 1-ին, 2-րդ և 6-րդ փողոցների վրա են տեղակայված գյուղի հասարակական հաստատությունները: Համայնքի հյուսիս-արևելքում և հյուսիս-արևմուտքում տեղակայված են պատմամշակութային հողեր, պտղատու այգիներ, մնացածը՝ վարելահողեր և արոտավայրեր են:
Բնակելի տները հիմնականում անհատական կամ բլոկացված տիպի 1-2 հարկանի քարե կառույցներ են,



ծածկված թեք տանիքներով, տեղակայված են հիմնական փողոցների երկայնքով, տնամերձերի հակառակ կողմը տնտեսական շինություններ են, դրանց ելքերը նախատեսված են դեպի օժանդակ ճանապարհներ՝ անասուններին արածեցման դուրս բերելու համար:



<u>Մեկ-երկու հարկանի անհատական տներով կառուցապատում</u>

Գյուղի 1-ին, 2-րդ և 6-րդ փողոցներում կենտրոնացված են հասարակական գործառույթները՝ վարչական (համայնքապետարան), կրթական և նախակրթական (դպրոց,մանկապարտեզ), բուժական (ամբուլատորիա), մշակութային (մշակույթի տուն), սոցիալ-կենցաղային (հանդիսությունների սրահ, փոստի բաժանմունք, խանութներ, առևտրիկետեր):
Ճարտարապետությունը բնորոշ է XX դարի 70-ական թվականներին՝ պարզ և ֆունկցիոնալ է: Գյուղի ընդհանուր օգտագործման տարածքները հիմնականում բարեկարգ են, կանաչապատումը բնական կանաչի և տնամերձերի հաշվին է:
Գյուղի հյուսի-արևելյան մասում են գտնվում գյուղատնտեսական արտադրության տարածքները: Խոշոր եղջերավոր անասնաֆերմաների ընդհանուր տարածքը կազմում է 4,36 հա, որից օգտագործվում է 2,34 հա: Համայնքի սահմաններում գոյություն ունի մեկ հանքավայր (ավազահանք) ընդհանուր 4,23 հա տարածքով: Ընդհամենը համայնքի տարածքում արդյունաբերական, գյուղատնտեսական արտադրության և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիային են պատկանում 14,81 հա հողատարածք:
Համայնքի տարածքում գոյություն ունեն հացաթղման մի շարք արտադրամասեր:

## III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

### 3.1.տվյալներ պատմության և մշակույթի հուշարձանների մասին

ՀՀ Կոտայքի մարզի բոլոր բնակավայրերը, գրեթե առանց բացառության, հարուստ են պատմամշակութային ժառանգությամբ:
ՀՀ Կոտայքի մարզի տարածքի պատմամշակութային հուշարձանների թվին են դասվում
-հնագիտական քարեդարյան կայաններ, ժայռապատկերներ, քարայր կացարաններ, մեգալիթյան կոթողներ, վիմագրական հուշարձաններ, հնագույն և միջնադարյան բնակատեղիներ, ամրոցներ, դամբարանադաշտեր, պաշտամունքային և քաղաքացիական կառույցներ, կամուրջներ և այլն,
- պատմության և մշակութային նշանավոր իրադարձությունների և նշանավոր գործիչների հետ առնչվող կառույցներ, կոթողներ, հուշահամալիրներ, գերեզմաններ:
-քաղաքաշինական և ճարտարապետական՝ պատմական բնակավայրեր,թաղամասեր, փողոցներ, բնակելի, պալատական, պաշտամունքային հասարակական, արտադրական կառույցներ, ժողովրդական տներ, ճարտարապետական կոթողներ:

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը (հաստատված՝ ՀՀ կառավարության 24.12.2003թ. N1793-Ն) բերվում է ստորև, հավելված 1-ում

*Հավելված 1*

| Հուշարձանի համարը | Հուշարձանի ենթահամարը (ենթահամարներ) | | | Հուշարձանախումբը, հուշարձանը | Ժամանակը | Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն | Նշանակությունը հանրապետական/ տեղական | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1. | | | | <<Ալաքաձև>> ամրոց | Ք.ա. II-I հազ. Օգտ. միջնադարում | գյուղից 6 կմ հյուս-արևմ. | Հ | Քասաղ գետի ձախ ափին |
| 2. | | | | Դամբարանադաշտ | Ք.ա. 2-1 հազ. | գյուղից 3կմ հյուսիս | Հ | |
| 3. | | | | Դամբարանադաշտ | Ք.ա. 2-1 հազ. | գյուղից 2կմ հյուսիս | | |
| 4. | | | | <<Անահիտ Աստվածուհու>> հուշարձան | 1973թ. | գյուղի կենտրոնում | Հ | |

Նոր Երզնկայից Կարբի տանող ճանապարհի աջ կողմում, Քասաղ գետի ձախ ափին <<Ալաքաձև>> ամրոցի տարածքում է գտնվում 1235 թվականի Քուրդ Վաչուտյանի կողմից կառուցված խաչքարը: Տարածքում կան բազմաթիվ շինությունների ավերակներ՝ հիմնականում փոսորակների և քարակույտների տեսքով, որի կենտրոնում պահպանվել է միջնադարյան գերեզմանոցի մի փոքր հատված: Տարածքը կանաչապատ է:



Հուշարձանների պահպանությանը, վերականգնմանը և վերակառուցմանն ուղղված միջոցառումների իրականացման համար առաջարկվում է, համապատասխան մասնագետների ներգրավմամբ, իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք կնպաստեն համայնքում առկա արժեքների պահպանմանը և դրանց ծառայեցմանը բնակիչների և հյուրերի մշակութային կարիքներին: Կարևոր և առաջնահերթ են հետևյալ միջոցառումները.

- համայնքի տարածքում հաշվառված և պետական ցանկում ընդգրկված բոլոր հուշարձանների իդենտիֆիկացումը, լուսանկարումը, նկարագրությունը, կառույցների չափագրությունը, հուշարձանների վկայականների կազմումը, համայնքում հուշարձանների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը,
- հուշարձանների տեխնիկական վիճակի գնահատումը, վերականգնման կարիք ունեցող հուշարձանների ընդգրկումը համայնքի կամ պետության կողմից նախատեսվող նպատակային ծրագրերում,
- սույն նախագծով սահմանված պահպանական գոտիների ճշտումը տեղանքում և դրանցում առկա քաղաքաշինական իրավիճակի գնահատումը, նկարագրությունը, անհրաժեշտության դեպքում՝ կարգավորումը,

- հուշարձանների և դրանց պահպանական գոտիների, ինչպես նաև դեպի հուշարձաններ տանող ճանապարհների բարեկարգում,

### *3.2. Պատմամշակութային* հուշարձանների պահպանական գոտիներ

Նոր Երզնկայի տարածքում գտնվող հուշարձանների պահպանական գոտիները սահմանվել են հաշվի առնելով հուշարձանների նշանակությունը, դրանցով զբաղված տարածքների առանձնահատկությունները, շրջակայքում առկա իրավիճակը: Հուշարձաններով զբաղեցված տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 40.5 հա:

Համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի հուշարձանների պահպանական գոտիների՝ համակարգը իր մեջ ներառել է.

ա/ հուշարձանների պահպանության գոտիները,

բ/ կառուցապատման կարգավորման գոտիները,

գ/ լանդշաֆտի պահպանման գոտիները,

որոնցում սահմանվել է օգտագործման պայմանակարգը /ռեժիմը/:

Համաձայն <<СНиП 2.07.01-89 <<Градостроительство. Планировка и застройка городских и сельских поселений>> շինարարական նորմերի 9.22-րդ կետի՝ ինժեներատրանսպորտային կոմունիկացիաներից մինչև պատմամշակութային հուշարձանների հեռավորությունը պետք է ընդունվի ոչ պակաս քան՝

- ջրամատակարարման, կոյուղու, ջերմամատակարարման ցանցերից /բացի բաշխիչ ցանցից/ 15.0 մ,

-այլ ստորգետնյա ինժեներական ցանցերից 5.0 մ:

Առկա կառուցապատման պայմաններում թույլատրվում է կրճատել նշված հեռավորությունները, սակայն ընդունել ոչ պակաս , քան

-մինչև ջրատար ցանցերը՝ 5.0 մ,

- ոչ ջրատար ցանցերը՝ 2.0 մ:

Ընդ որում, այս դեպքերում, շինարարական աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է ապահովել հատուկ տեխնիկական միջոցառումներ: Հուշարձանների պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման հետ կապված գործունեությունը պետք է իրականացվի՝ քաղաքաշինական գործունեությունը կարգավորող իրավական ակտերով և «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրության, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ սահմանված դրույթներին համապատասխան:

Հուշարձանների կառուցապատման կարգավորման գոտին ուրվագծված սահմանով պարփակված տարածք է, որում սահմանված են քաղաքաշինական և ճարտարապետական սահմանափակումները և պահանջները: Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգում կառուցապատման կարգավորվորման գոտիների սահմանումը կարող է ապահովել քաղաքի հատվածների հետագա կառուցապատման ծրագրերի իրականացումը պատմական միջավայրի և հուշարձանների քաղաքաշինական և ճարտարապետական սկզբունքներին հարազատ:

## IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքն ունի սեփականություն, որի իրավունքը պաշտպանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, որը ներկայացված է հավելված 2-ում: Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել էր, սակայն գույքի 80%-ը համայնքի միջոցներով աստիճանաբար վերականգնվել են: Սակայն կան դեռևս չլուծված խնդիրներ:

*Հավելված 2*

| Հ/Հ | ԿԱՌՈՒՅՑԸ | ՀԱՍՑԵ | ԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ | Չափը | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ | ՆՈՐՈԳՄԱՆ/ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ/ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԿԱՐԻՔ | ԱՅԼ ՆՇՈՒՄՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Նոր Երզնկայի համայնքապետարան | գ. Նոր Երզնկա 2-րդ փող. շ 33 | 1980թ. | 650 քմ | լավ | մասնակի վերանորոգման կարիք | - |
| 2. | Մշակույթի տուն | գ. Նոր Երզնկա 1-ին փող. շ29 | 1979թ. | 1526 քմ | լավ | - | |
| 3. | Մանկապարտեզ | գ. Նոր Երզնկա 6-րդ փող. շ 30 | 1972թ. | 385 քմ | լավ | - | - |
| 4. | Բուժամբուլատորիա | գ. Նոր Երզնկա 2-րդ փող. շ 50 | 1976թ. | 190,4 քմ | բավարար | մասնակի վերանորոգման կարիք | - |
| 5. | Հուշահամալիր | գ. Նոր Երզնկա | 1975թ. | 50 քմ | բավարար | - | - |
| 6. | Ջրահեռացման համակարգ (կոյուղի) | գ. Նոր Երզնկա | 1978թ | 20 կմ | բավարար | - | - |
| 7. | Ոռոգման ցանց | գ. Նոր Երզնկա | 1980թ. | 40 կմ | վատ | - | - |
| 8. | Էլեկտրական ենթակայան | գ. Նոր Երզնկա | 1978թ. | 2 հատ 35քմ. | բավարար | - | - |
| 9. | Լուսավորման համակարգ (լուսատուներ լամպերով) | գ. Նոր Երզնկա | 2008թ. | 100 հատ | լավ | - | - |
| 10. | Գազատար | գ. Նոր Երզնկա | 1982թ. | 20կմ | լավ | - | - |
| 11. | Ավտոճանապարհ ասֆալտապատ | գ. Նոր Երզնկա | 1975թ. | 17 կմ | Բավարար | - | - |
| 12. | Գերեզմանոց | գ. Նոր Երզնկա | 1965թ. | 0,51 հա | լավ | - | - |
| 13. | Գերեզմանոց | գ. Նոր Երզնկա | 1970թ. | 4,0 հա | լավ | - | - |

Բնակավայրի գոյություն ունեցող հասարակական կառույցները տեղակայված են 1-ին և 2-րդ և փողոցների երկայնքով և խմբավորվում են որպես հասարակական կենտրոն: Այստեղ են գտնվում դպրոցի, հավաքույթների սրահի, համայնքապետարանի, փոստի շենքերը, մշակույթի տունը: Փողոցը այս հատվածում դառնում է հրապարակ, որի կենտրոնում կանգնած է Անահիտ Աստվածուհու հուշարձանը:

Գյուղի բնակչությունը 1957 մարդ է, բնակելի ֆոնդը՝ 62 մենատուն և 268 բնակարան բազմաբնակարան բլոկացված տիպի տներում, 97%-ը՝ 1-2 հարկանի, բնակչության միջին ապահովվածությունը բնակելի մակերեսով՝ 19.05 քմ/մարդ: Մենատները սեփական միջոցներով կառուցված բնակելի տներ են: 1-2 հարկանի շենքերը շահագործման են հանձնվել 1968-1988 թվականներին: Նոր թաղամասում, որը հիմնվել է 1991 թվականին, այժմ ավելի քան 42 տների շինարարություն գտնվում է ավարտվածության տարբեր աստիճանում:

Համայնքապետարանը գտնվում է համայնքի կենտրոնում, շենքային պայմանները գերազանց է: 2016 թվականին համայնքի միջոցներով իրականացվել է կապիտալ վերանորոգում:



<u>Համայնքապետարան</u>

Համայնքը ունի մեկ նախադպրոցական հաստատություն, որի հզորությունը նախատեսված է 120 երեխաների համար, սակայն ներկա դրությամբ մանկապարտեզ են հաճախում շուրջ 60 երեխա՝ 2 խումբ, որոնց սպասարկում են 13 աշխատողներ: Համայնքում նախադպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:



<u>Մանկապարտեզ</u>

Համայնքն ունի մեկ միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 249 երեխա, աշխատում են 23 ուսուցիչներ և 7 սպասարկող անձնակազմ: Համայնքի դպրոցը գտնվում է լավ վիճակում: Համայնքի միջնակարգ դպրոցի բակում է գտնվում մոտ 840 քմ ընդհանուր մակերեսով ֆուտբոլի դաշտը:



Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց

Համայնքում գործող կրթական հաստատությունները մշտապես գտնվում են համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում: Համայնքապետարանի կողմից իրականացվում են մի շարք ծրագրեր խթանելու կրթության մակարդակի բարելավմանը, օժանդակելու կրթօջախների առջև ծառացած խնդիրների լուծմանը:

Համայնքն ունի մշակույթի տուն որն ունի շենքային լավ պայմաններ, այստեղ է գտնվում համայնքի գրադարանը, որտեղ կա շուրջ 7213 կտոր գրականություն և տարեկան սպասարկում է 420 ընթերցող:



Նոր Երզնկայի Մշակույթի տուն

Համայնքում գործում է մեկ բուժամբուլատորիա, որտեղ աշխատում են 1 բժիշկ և 2 բուժքույրեր, շենքը մասնակիորեն վերանորոգվել է Սոցիալական ներդրումների հիմնադրամի և համայնքապետարանի միջոցներով, համայնքն իր միջոցներով նախատեսում է կատարել շենքի գազաֆիկացում: Համայնքի կենտրոնում կանգնեցված է խաչքար հուշարձան նվիրված Արցախի գոյամարտի զոհվածների հիշատակին:

Համայնքն ունի նաև հանդիսությունների սրահ տարբեր բնույթի միջոցառումների անցկացման համար:

## V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

Նոր Երզնկա համայնքի կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքները գոտևորվել են ըստ՝

ա) գործառնական նշանակության. հողատարածքներն առանձնացվել են ըստ գործառնական օգտագործման, սահմանվել են թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) տեսակները, ամրագրվել են գոտու տարածքի ընդհանուր մակերեսի նկատմամբ վերջիններիս սահմանային չափաբաժինները.

բ) ծավալատարածական չափորոշիչների. ըստ տվյալ հողատարածքի համար թույլատրելի չափաբաժինների սահմանվել են՝ կառուցապատման խտությունը, շենքերի ու շինությունների բարձրությունը, կառուցապատված, կանաչապատ մակերեսների հարաբերակցությունը:

Գոտևորմամբ սահմանված տարածքների օգտագործման ու կառուցապատման պայմանները տարբերվում են մեկից մյուս գոտի անցնելիս, բայց հաստատուն են նույն գոտու սահմաններում:

### 1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

Համայնքի տարածքի բոլոր գոտիներում իրականացվող նոր կառուցապատման, վերակառուցման, վերանորոգման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներին ներկայացվում են հետևյալ պահանջները.

Նախընտրելի են բնական և էկոլոգիապես անվնաս շինանյութերը՝ տուֆ, բազալտ,տրավերտին, կրաքար, այլ բնական քարեր, փայտ, մետաղ, ապակի, բետոն, ավազի վրայով արտաքին ֆասադային ներկ:




Շենքերի շքամուտքեր.
Շենքերի շքամուտքերի աստիճանները չպետք է անցնեն փողոցի /կարմիր գիծը/ կառուցապատման կանոնակարգման գիծը:

Արտաքին գովազդ.
Շենքերին կցված գովազդային վահանակների մակերեսը չպետք է գերազանցի շենքի ճակատային պատի 10 %-ը:

Փողոցներում տեղադրվող առանձին կանգնած գովազդային վահանակները պետք է տեղադրվեն մոտակա կարգավորվող խաչմերուկից առնվազն 50մ հեռավորության վրա:

Նկուղներ և կիսանկուղներ.

-բնակելի տների նկուղային և կիսանկուղային հարկերը չպետք է ունենան փողոցի կողմից մեկուսացված մուտքեր:

- բոլոր շենքերի կիսանկուղների պատուհանների գոգերը մայթից պետք է բարձր լինեն առնվազն 30 սմ:




Ճակատներ.

- անհրաժեշտ է հաշվի առնել, որ դռները, պատուհանները և պատշգամբները՝ դեկորատիվ այլ տարրերի բացակայության պարագայում, շենքի ճակատը ձևավորող միակ էլեմենտներն են և դրանց արտաքին ձևը, համաչափությունը, շրջանակների և բազրիքների բաժանումները և գույնը ՝ ճակատը ձևավորելու կարևոր միջոցներ են:
- շենքերի ճակատների (փողոցային և բակային) արտաքին հարդարանքի հետ կապված բոլոր շինարարական և վերանորոգման աշխատանքները պետք է կատարվեն միայն սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերով, ընդ որում՝ լուծումները պետք է տրվեն շենքի ամբողջական ճակատի համար և համապատասխանեն մնացած ճակատներին:
- ճակատների ձևավորման համար առաջարկվում է լայն կիրառում տալ ուղղաձիգ կանաչապատմանը:

Տանիքներ.

- գյուղական միջավայրին առանձնահատուկ հմայք են հաղորդում կղմինդրով ծածկված լանջավոր տանիքները: Կարելի է կիրառել կղմինդրի բոլոր տեսակները՝ բնական, մետաղե, չերտաքարե և այլ: Մետաղյա թիթեղով ծածկված տանիքին գեղարվեստական որակ տալու համար ցանկալի է այն ներկել պատից մուգ գույներով (կարմիր, դարչնագույն, մուգ կանաչ և այլ):
- լանջավոր տանիքների առավելագույն թեքությունը (i) պետք է ընդունել - 0.5,
- լանջավոր տանիքների գագաթի բարձրությունը պետք է սահմանափակվի կառույցի
խորության կեսի չափով:

Ցուցանակներ և անվանատախտակներ.

- Փողոցների անվանատախտակները պետք է տեղադրվեն ստանդարտ չափերով՝ միասնական հատուկ նախագծի համաձայն,
- շենքերի համարների չափերը պետք է ընդունվեն՝

ա) լուսավորությամբ, կլոր՝ տրամագիծը - 30 սմ
բ) առանց լուսավորության՝ քառակուսի - 15 x 15 սմ:
Հիմնարկությունների անվանատախտակները և բնակիչների անվանատախտակները կցվում են միայն շքամուտքների դռներին:

Գունային լուծումներ.
-շրջակա միջավայրի բնական պալիտրային ներդաշնակ: Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի հիմնական տարրերը գերադասելի է լուծել մեղմ գույներով՝ օգտագործելով օխրայի, սերակոտաների, մոխրագույնի և դարչնագույնի բոլոր երանգները:
Որոշ դեպքերում՝ կոնտրաստային ջեշտադրումներ ստեղծելու նպատակով կիրառելի է նաև արհեստական վառ գույների օգտագործումը՝ ժամանակավոր կառույցների,բարեկարգման առանձին էլեմենտների /նստարաններ, աղբամաններ, զովացուցիչստենդեր և այլն/ համար:

Փողոցային լուսավորություն.

- Մինչև 12 մ լայնություն ունեցող փողոցներում լուսավորության սյուների կիրառումն արգելվում է: Այս կարգի փողոցներում լուսավորությունը պետք է կազմակերպվի պատի աշտանակներով (բրա):

Աղբահեռացման կոնտեյներներ.

- Համաքաղաքային նշանակության փողոցների, ինչպես նաև հասարակական առավելագույն ծգրոտության և կուտակման վայրերին հարակից տարածքներում աղբարկղները տեղադրել ոչ ավելի, քան 100 մ հեռավորության վրա, հատուկ փակվող տիպի, բանուկ մասերին չխանգարող տարածքներում,
- շրջանային նշանակության փողոցների վրա՝ 100 –200 մետրը մեկ,
- տեղական նշանակության փողոցների վրա հիմնական խաչմերուկների վրա, դրանց հեռավորությունը 200 մետրից պակաս լինելու դեպքում՝ 200 մետրը մեկ:

2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

Արտաքին տրանսպորտ

Հեռավորությունը մայրաքաղաքից 22 կմ է: Ուղևորափոխադրումները կատարվում են Աշտարակ քաղաքի միկրոավտոբուսներով: Համայնքի գերակշռող տրանսպորտային փոխադրամիջոցն ավտոմոբիլայինն է, իսկ հիմնական ճանապարհային կապը՝ Հ-6 հանրապետական նշանակության ճանապարհը, որը անցնում է գյուղի հարավ-արևմտյան սահմանով: Գյուղի միջով տարանցիկ ավտոմայրուղիներ չեն անցնում, ինչը բարենպաստ է բնապահպանական և ֆունկցիոնալ տեսակետներից: Արտերկրի հետ կապն իրականացվում է օդային տրանսպորտով, Երևանի <<Զվարթնոց>> օդանավակայանից, որի հեռավորությունը համայնքից կազմում է 30 կմ:

Հ-6–ի ավտոմայրուղու հարակից տարածքները զարգանում են որպես ակտիվ կենսագործունեության առանցք՝ լրանալով տարբեր տեսակի հասարակական սպասարկման ծառայություններ մատուցող օբյեկտներով: Այս միտումը նախատեսվում է զարգացնել, ստեղծելով ճանապարհային առանցքի շուրջ հյուրանոցային, ռեկրեացիոն, առևտրի և սպասարկման գոտիներ: Համաձայն համայնքապետարանի տվյալների՝ համայնքի բնակչության թիվը կազմում է 1957 մարդ, գրանցված ավտոմոբիլների թիվն է մոտ 549 միավոր:

Ներքին տրանսպորտ և փողոցային ցանց
Փողոցային ցանցը կանոնավոր է, հարմար հատակագծմամբ: Հիմնական փողոցները և գյուղ մտնող ճանապարհը ասֆալտապատ են, որոշ մասը բարեկարգման կարիք ունի: Նախատեսված են շրջադարձի հարթակներ, անասունների համար օժանդակ ճանապարհներ:

Տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացում

Համայնքի փողոցային ցանցի վերականգնման (բարեկարգման) և նոր թաղամասերում՝ ստեղծման համար կպահանջվեն բավականաչափ մեծ ֆինանսական միջոցներ:
Նախատեսվում են ընդհանուր առմամբ 13.5 կմ նոր ճանապարհներ և փողոցներ: Նոր փողոցների առավելագույն լայնությունը 10մ (2 գիծ), նվազագույնը 9մ (2 գիծ):
Փողոցների լայնական կտրվածքները բերված են Տրանսպորտային ուրվագիծ գծագրում: Համայնքի փողոցային ցանցի վերականգնման (բարեկարգման) և նոր թաղամասերում՝ ստեղծման աշխատանքներին ներկայացվում են հետևյալ պահանջներ.
-Առավելագույն անջրանցիկ մակերեսների տոկոսը՝ չի սահմանափակվում, կանաչապատման տոկոսը՝ նվազագույնը՝ չի սահմանափակվում, առավելագույնը՝ ապահովելով ճանապարհային նորմերը /կողային տեսանելիություն և այլ/:
-Ավտոճանապարհին հարակից գոտիներում ըստ անհրաժեշտության թույլատրվում է տեղադրել ավտոճանապարհը սպասարկող օբյեկտներ՝ թույլատրելի օգտագործման ձևեր՝ տրանսպորտային համակարգի կառույցներ, ավտոկայանատեղեր, միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտի կանգառներ, տրանսպորտի հավաքատեղիներ:

-Ավտոճանապարհին հարակից գոտիներում ըստ անհրաժեշտության թույլատրվում է տեղադրել ավտոճանապարհը սպասարկող թեքահարթակներ ու հատուկ հարմարանքներ

-Ճանապարհային եզրային կանաչապատում, արտաքին լուսավորություն, զովացող, փոքր ճարտարապետական ձևերը՝ սահմանափակ, չխաթարելով հետիոտն երթևեկությունը, զբոսարաններ, շվաքարաններ, նստարաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում, ծաղկանոցներ և բարեկարգման այլ տարրեր:

-Կառույցի տեխնոլոգիական պահանջները բավարարող նվազագույն չափերի:

## 3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

### Համայնքի կանաչապատման միջոցառումներ

Համայնքի կանաչապատման միջոցառումները նախատեսվում են հետևյալ հիմնական ուղղություններով. Համայնքի բնակեցված տարածքում և նոր թաղամասերում.
- Զբոսայգիների և պուրակների ստեղծում,
- Կանաչ մարզադաշտերի և տարբեր սպորտաձևերի համար հրապարակների ստեղծում,
- Ճանապարհների և փողոցների երկայնքով կանաչապատման նախատեսում,
- Գերեզմանոցների և արտադրական տարածքների սանիտարական գոտիների կանաչապատում:

Նախատեսված միջոցառումների իրականացման պայմաններում հեռանկարային ցուցանիշների հաշվարկով կլինի 57մ2/մարդ ընդհանուր օգտագործման կանաչ, ինչը մի քանի անգամ գերազանցում է նորմերով սահմանված նվազագույն 12 մ2 /մարդ պահանջը:

Համայնքի կանաչապատման աշխատանքների հետ միաժամանակ պետք է իրականացվեն նաև այլ բարեկարգման միջոցառումներ՝ մայթերի ստեղծում, դրանց եզրաքարերի տեղադրում, ճանապարհների ասֆալտապատում, բաց տարածքների կահավորում նստարաններով, զբոսարաններով, փոքրիկ ցայտաղբյուրներով և այլ փոքր ճարտարապետական ձևերով:
Համայնքի կանաչապատման աշխատանքների իրականացման համար որպես ուղեցույց կարող են ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N33 հրամանով հաստատված «Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում ռեկրեացիոն, լանդշաֆտային, առողջարանային, համակարգերի տեղաբաշխման և տարածքային կազմակերպման նախագիծ.Քաղաքաշինական կանոնադրություն. Քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչներ» մեթոդական ցուցումները (տեղադրված է www.mud.am կայքում), որոնք ներառում են կանաչապատման հիմնական սկզբունքների, կանոնների նկարագրություններ, բացատրություններ և բազմաթիվ օրինակներ, որոնք կարող են կիրառվել նաև Նոր Երզնկա համայնքի կանաչապատման աշխատանքներում:
Համայնքի տնտեսության զարգացման, մարդկանց բարեկեցության, բնական միջավայրի և լանդշաֆտային բնութագրերի բարելավման համար էական ազդեցություն կունենա նոր պտղատու այգիների ստեղծումը:

Լանդշաֆտների զարգացմանն ուղղված միջոցառումներ

Համայնքի տարածքում ընդգրկված լանդշաֆտների զարգացմանն ուղղված միջոցառումներն առաջարկվում են երկու հիմնական ուղղություններով՝ միջոցառումներ բնական լանդշաֆտների պահպանության և գյուղատնտեսության մեջ ընդգրկված հողերի և պտղատու այգիների ընդլայնման և միջոցառումներ քաղաքաշինական լանդշաֆտների բնութագրերի բարելավման ու զրավիչ միջավայրի ստեղծման համար:

Բնական լանդշաֆտների վրա ոչ անմիջապես, սակայն էականորեն ազդող գործոն են համարվում աղբահանության խնդիրների կանոնակարգումը, կենցաղային և հեղեղատար կոյուղու կառուցումը, շրջակա միջավայրն աղտոտող արտանետումների և գյուղատնտեսությունում կիրառվող պարարտանյութերի սահմանափակումը: Հաշվի առնելով, որ բնակչությունն օգտագործում է բոլոր մասնկի բնական լեռնալանջերն որպես արոտավայրեր և խոտհարք, անհրաժեշտ է կառավարել բեռնվածությունը լանջերի վրա, թույլ տալով բնական ծածկույթի ինքնավերականգնումը:

Քաղաքաշինական լանդշաֆտները ձևավորվել են մարդու կողմից իրականացվող տարբեր տեսակի գործունեության արդյունքում: Այդ տեսանկյունից դիտարկվում են.

- պատմամշակութային արժեք ներկայացնող տարածքները,
- բնակավայրի կառուցապատված հատվածները,
- գյուղատնտեսական նշանակության հողատարածքները,
- արտադրական /գյուղարտադրություն, ընդերքօգտագործում/ տարածքները:

Համայնքի տարածքի լանդշաֆտային բնութագրերի վրա էական ազդեցություն են թողնում գյուղատնտեսական նշանակության հողատարածքները: Մշակված հողահանդակները, դաշտերը բամուց պաշտպանող ծառաշերտերը, պտղատու այգիները և արոտավայրերը - այն հիմնական տարրերն են, որ ստեղծում են գյուղական վայրերին բնորոշ լանդշաֆտներ: Գյուղատնտեսական լանդշաֆտների բարելավման համար, հողերի էրոզիայի երևույթների կանխարգելման, հողի բերրի շերտի որակի բարձրացման համար կարևորվում են ոռոգման համակարգերի առկայությունը, գյուղատնտեսական գործունեության դիվերսիֆիկացումը, գյուղատնտեսության վարման ընդհանուր մշակույթի բարձրացումը: